Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-701-13.11.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի «հարկային ծառայության կադրերի ռեզերվ» պարբերությունում «ծառայողները» բառից հետո լրացնել «, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «ինչպես նաեւ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում» բառերով,

2) լրացնել հետեւյալ խմբագրությամբ 3.1-ին, 3.2-րդ եւ 3.3-րդ մասեր.

«3.1. Հարկային ծառայության թափուր պաշտոններ առաջանալու դեպքում, մինչեւ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը, հաշվի առնելով սույն օրենքի 17-րդ հոդվածով եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները եւ «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ այդ պաշտոնները կարող են զբաղեցվել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով: Ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3.2. Հարկային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչեւ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել հարկային ծառայության կադրերի ռեզերվից սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն հարկային ծառայողին, որը հարկային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով հարկային ծառայության պաշտոնից:

3.3. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնելու դեպքերը եւ այդ պաշտոնների զբաղեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:»:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր եւ թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց դասային աստիճաններ չեն շնորհվում:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր եւ թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց հատուկ կոչումներ չեն շնորհվում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-701-13.11.2023-ՏՀ-011/~~4~~
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի «հարկային ծառայության կադրերի ռեզերվ» պարբերությունում «ծառայողները» բառից հետո լրացնել «, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «ինչպես նաեւ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում» բառերով,

2) լրացնել հետեւյալ խմբագրությամբ 3.1-ին, 3.2-րդ եւ 3.3-րդ մասեր.

«3.1. Հարկային ծառայության թափուր պաշտոններ առաջանալու դեպքում, մինչեւ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը, հաշվի առնելով սույն օրենքի 17-րդ հոդվածով եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները եւ «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ այդ պաշտոնները կարող են զբաղեցվել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով: Ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3.2. Հարկային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչեւ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել հարկային ծառայության կադրերի ռեզերվից սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն հարկային ծառայողին, որը հարկային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով հարկային ծառայության պաշտոնից:

3.3. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնելու դեպքերը եւ այդ պաշտոնների զբաղեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:»:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր եւ թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց դասային աստիճաններ չեն շնորհվում:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր եւ թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց հատուկ կոչումներ չեն շնորհվում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (Կ-701-13.11.2023-ՏՀ-011/1), «Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-701[1]-13.11.2023-ՏՀ-011/1), «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-701[2]-13.11.2023-ՏՀ-011/1) և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-701[3]-13.11.2023-ՏՀ-011/1) օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին»	**«Հարկային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրենքների՝ 1. նախագծերով նախատեսված կարգավորումների համաձայն հարկային կամ մաքսային ծառայության թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոնները կարող են զբաղեցվել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող	**Ընդունվել է:** Նախագծերի 1-ին հոդվածներից հանվել են «(այդ թվում՝ ռեզերվում գտնվող)» բառերը:	**Ընդունվել է:**

		օրենքների նախագծերի 1-ին հոդված	հարկային և մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով: Հաշվի առնելով, որ կադրերի ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով թափուր պաշտոնները զբաղեցվելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են վերոնշյալ նախագծերով, միաժամանակ, «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո այդ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար այլ անձի հետ մինչեւ 2024 թվականի հուլիսի 1-ը ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ		

			կանոնակարգում, ուստի առաջարկում ենք «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածներից հանել «(այդ թվում՝ ռեզերվում գտնվող)» բառերը: 2. նախագծերի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթն առաջարկում ենք խմբագրել՝ «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:		
2.	ՀՀ կառավարություն	«Հարկային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Մաքսային	Նախագծերն ընդգրկվել են ՀՀ Ազգային ժողովի 2024 թվականի հունվարի 15-ին գումարվող նիստերի օրակարգում և ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել են 2024թ. հունվարի 16-ին:	**Ընդունվել է:** Նախագծերի համապատասխան հոդվածներով նախատեսվել է, որ օրենքներն ուժի մեջ են մտնում	**Ընդունվել է:**

		ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի 5-րդ, ««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի 2-րդ հոդվածներ	Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթը խմբագրել՝ «2024 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:	